ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԼԻՖՈՐՆԻՈ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԵՋ

Հայագիտության դասավանդությունները Կալիֆորնիո Համալսարանին մեջ ի Բերկլի սկսած են 1960 սեպտեմբերին՝ տարեկան ծրագրով։ Հայագիտության դասերը վարչության չափանիշով համազոր են համալսարանի գրականության ու արվեստի մյուս դասերուն։

Հայ դասավանդության ծրագիրը կրովանգակի չորս դասընթացք.

1. «Տարբերական հայերեն աշխարհաբար», մասնավորապես արևմտահայերեն, որ ամերիկահայության մեծ մասին բարբառն է։ Կավանդվի հայերենի քերականություն և ընթերցանություն։

2. «Միջնակարգ հայերեն», որ կընդգրկի հայ մատենագրական ընթերցումներ (նաև արևելահայերեն), ու հայերեն ազատ խոսակցություն։

3. «Գրաբարի դասընթացք», որուն առաջիկան է՝ գրաբարի քերականություն, մատենագրական ընթերցումներ, լեզվաբանական տարբալուծումներ ու համեմատություններ հնդեվրոպական լեզուներու հետ։

4. «Հայ մշակույթի պատմություն», զուգընթաց հայ քաղաքական պատմության, ներփակելով հայ ժողովուրդի բնկերական ու տնտեսական ծավալումը, և արվեստի ու գրականության մեջ՝ նվաճումները, վերջապես հայության խլյակներուն հիգերը՝ պահպանելու իրենց ինքնությունը։

Այս դասընթացներուն մասնակցած աշակերտության թիվը կներկայացնեն հետևյալ պատկերը.

Տարի	արձանագրված ուսանողություն	ազատ ունկնդիր
1960—1961	18	9
1961—1962	30	11
1962—1963	37	9
1963—1964	44	2
1964—1965	65	7
1965 աշնան	44	7
Համագումար	238	45

Այս հինգ տարվան ընթացքին մեր աշակերտությունը գրած է 18 քննաճառ (մոտավորապես 325 էջ) հայագիտական հարցերու շուրջ։ (Վարչական օրենքներու համաձայն՝ աշակերտը քրեական կներկայացնե կամ ավարտման քննության կներկայանա)։

Մեր աշակերտության թիվը, համեմատած ուրիշ արևելյան լեզուներու ու մշակույթի արձանագրված ուսանողության հետ, նախանձելի բարձրության վրա է և շատ քաջալերական՝ նկատելով տեղվույս փոքրաթիվ հայությունը, որ Սան Ֆրանսիսկոն ևս մեջն առնելով՝ 5.000-ը չանցնիր, մինչ Լոս Անճելոս 35—40.000 հայածին կհաշվի։ Հարվարդ համալսարանի հայագիտության աշակերտներուն թիվը 1960—1963՝ երեք տարվան շրջանին 16 էր, բաց դոկտ. Սանճյանի տեղեկագրության (Հունիս 22, 1963)։ Նույն շրջանին մենք ունեցած ենք 85 արձանագրված և 29 ազատ ունկնդիր։ Նախորդ թիվերն ու համեմատությունները (ներկա վիճակագրության բացառյալ)՝ հրատարակության տրված են Կալիֆորնիո հայ թերթերուն (օգոստոս 1965) և ներկայացված համալսարանի վարչության։

Դոկտոր ՊՈՂՈՍ ԷՍԱՊԱԼՅԱՆ (ԱՄՆ)

ԲՅՈՒԶԱՆԴԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ VII ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

1965 թ. դեկտեմբերի 13—18-ը Թբիլիսիում կայացավ բյուզանդագետների համամիութենական VII կոնֆերանսը, որ կազմակերպել էին ՍՍՌՄ ԳԱ պատմության բաժանմունքը և Վրացական ՍՍՌ ԳԱ հասարակագիտական բաժանմունքը։ Կոնֆերանսին մասնակցեցին բազմաթիվ բյուզանդագետներ Սովետական Միության տարբեր քաղաքներից՝ Մոսկվայից, Լենինգրա-

դից, Կիևից, Սվերդլովսկից, Ալմա-Աթայից, Խերսոնեսից, Երևանից ու Բաքվից։ Կոնֆերանսի աշխատանքներին մեծ մասնակցություն ունեցան վրաց բյուզանդագետները, պատմաբաններն ու արվեստագետները։ Կարդացված շուրջ 100 զեկուցումներից ավելի քան երեսունը պատկանում էին վրաց գիտնականներին։ Կոնֆերանսին մասնակցեցին Հայաստանից երեք և Ադրբեջանից մեկ մասնագետ։

Կոնֆերանսն ունեցավ չորս պլենար և բազմաթիվ սեկցիոն նիստեր։ Ըստ զեկուցումների թեմատիկայի ստեղծվել էին հինգ սեկցիաներ. պատմության և իրավունքի պատմության, արվեստի պատմության, հնագիտության և ճարտարապետության, հասարակական մտքի և գրականության և, վերջապես, բանասիրության ու օժանդակ դիսցիպլինների։

Կոնֆերանսը ներածական խոսքով բացեց Վրացական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Գ. Մերեթելին։ Նշելով համաՀիութենական VI կոնֆերանսից (1958 թ. Լենինգրադ) հետո Սովետական Միության բյուզանդագետների ձեռք բերած հաջողությունները, նա բարձր գնահատեց սովետական բյուզանդագետներ Ե. Է. Լիպշիցի, Ա. Պ. Կաժդանի, Զ. Վ. Ուդալցովայի, Մ. Յա. Սյուզյումովի և այլոց մեծ աշխատանքն ու ներդրումը բյուզանդագիտության մեջ։ Գ. Մերեթելին խոսեց սովետական բյուզանդագետների միջազգային կապերի մասին, մասնավորապես կանգ առավ վերջերս Հարավսլավիայի Օխրիդ քաղաքում կայացած բյուզանդագիտական միջազգային կոնգրեսի աշխատանքների վրա։ Վերջում նա կոնֆերանսի մասնակիցներին ծանոթացրեց վրաց բյուզանդագետների, հատկապես Ս. Դ. Ղաուխչիշվիլու, Տ. Կեչակմաձեի և այլոց ձեռք բերած հաջողություններին։

Պլենար նիստում առաջինը զեկուցեց Վրացական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Գ. Ն. Զուրինաշվիլին։ Զեկուցումը վերաբերում էր քրիստոնեական տաճարի սկզբնական ձևերի հարցին։ Զեկուցողը պնդում էր, թե Արևելքում քրիստոնեական տաճարները կառուցվել են ոչ թե բազիլիկաների ձևով, այլ կենտրոնագմբեթ։ Բազիլիկան Վրաստանում, ասում է նա, ինչպես և Ասորիքում օտարոտի է, այն վերևից էր պարտադրված, կապված չէր երկրի ճարտարապետության բնականոն զարգացման հետ։ Գ. Ն. Զուրինաշվիլին արատավոր է համարում «գմբեթավոր բազիլիկա» տերմինը։

Նույն պլենար նիստում լսվեց նաև ակադեմիկոս Ռիբակովի զեկուցումը Կերչի ծոցում գտնվող «ռուսական-բյուզանդական քաղաք» Տմուտարականի մասին։ Զեկուցողը կանգ առավ վերջերս այնտեղ կատարված հնագիտական պեղումների, ձեռք բերված հնագիտական հարուստ նյութերի վրա, որոնք պարզում են այն սերտ կապերը, որ Տմուտարականն ունեցել է տարբեր երկրների, այդ թվում նաև Անդրկովկասի հետ։ Ըստ զեկուցողի հայտնաբերվել է նույնիսկ Անիի տիպի խեցեղեն։

Հետաքրքիր էր պրոֆ. Ս. Դ. Ղաուխչիշվիլու զեկուցումը՝ «Նոր նյութեր բյուզանդական ժամանակաշրջանի հունարենի պատմության մասին»։ Ամբողջ աշխարհի բյուզանդագետները դեռ չորս տասնամյակ առաջ ձեռնամուխ էին եղել և այժմ էլ աշխատում են լրացնել Դյուկանժի հունարենի նշանավոր բառարանը։ Պրոֆ. Ղաուխչիշվիլին կանգ է առնում հին վրացական թարգմանությունների վրա, որոնք հնարավորություն են տալիս ճշտելու բյուզանդական շրջանի մի շարք հունարեն հայտնի բառերի իմաստները, իսկ մյուս կողմից՝ գտնել բառեր, որոնք տեղ չեն գտել հունարենի և ոչ մի բառարանում։

Դեկտեմբերի 14-ից սկսվեցին սեկցիաների աշխատանքները։ Այս հաղորդման մեջ հնարավոր չէ կանգ առնել կարդացված շուրջ հարյուր զեկուցումների վրա, բայց մի քանիսին անդրադառնալը անհրաժեշտ է։

Պատմության և իրավունքի պատմության սեկցիայում արժեքավոր էր պատմական գիտությունների դոկտոր Ե. Է. Լիպշիցի զեկուցումը՝ «Բյուզանդական «Երկրագործական օրենքը» և սրա գործածությունը բալկանյան երկրներում»։ Կազմված լինելով VIII դարում Իսավրական հարստության կայսրերի կողմից, «Երկրագործական օրենքը» ժամանակի ընթացքում, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հետ միասին, աստիճանաբար փոփոխվել է, տարածվելով բալկանյան երկրներում։ Մեզ են հասել «Երկրագործական օրենքի» յոթ տարբերակ՝ երկուսն ստեղծվել են բյուզանդական ժամանակաշրջանում, մեկը՝ Բյուզանդական կայսրության անկումից հետո, երկուսը սերբերեն թարգմանություններ են, մեկը սլավոնա-ռուսական, մեկը՝ ռումինական։ Համեմատելով այդ բոլոր տարբերակները սկզբնականի հետ, Լիպշիցը ցույց է տալիս, թե ինչպես է անդրադարձել նրա վրա երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պրոցեսը, ինչպես է բյուզանդական իրավունքը ազդել բալկանյան միջնադարյան պետությունների իրավունքի վրա։

Ուշագրավ էր վրաց պատմաբան Ն. Յու. Լոմուրիի «Արևմտյան Վրաստանի և Բյուզանդիայի փոխհարաբերությունների (VIII—IX դդ.) պատմության շուրջը» զեկուցումը։ Զեկուցողը ցույց տվեց, որ VIII դարի վերջում Արևմտյան Վրաստանը (Լազիկան) գաղարում է Բյուզանդական կայսրության վասալը լինելուց։ Լազիկայում կազմավորվում է այսպես կոչված «Ար-

խազական թագավորությունը», որն իր անունը ստացավ Աբխազիայի իշխաններից՝ մթավարներից, որոնք գլխավորեցին Բյուզանդիայի դեմ մղվող պայքարը, ինչպես և ամբողջ Արևմտյան Վրաստանի միավորումը։ Ն. Լոմոուրիի կարծիքով «Աբխազական թագավորությունը» փաստորեն վրացական քաղաքական միավորում էր։

Հայագետների և ընդհանրապես կովկասագետների համար հետաքրքրություն էր ներկայացնում Ռ. Ա. Հյուսեինովի զեկուցումը՝ «1071 թ. Մանազկերտի ճակատամարտի հետևանքները Անդրկովկասի համար»։ Նա կանգ առավ XI դարի առաջին կեսում Անդրկովկասի նկատմամբ Բյուզանդիայի վարած սխալ քաղաքականության վրա, որը թուլացրեց այդ երկրները քաղաքական ու ռազմական իմաստով այն ժամանակ, երբ սելջուկների կողմից դլխավորվող օղուզ թուրքերի սպառնալիքը Անդրկովկասի համար ակնհայտ էր դարձել։ Բյուզանդիայի նման քաղաքականությունից, ինչպես ճիշտ նշեց զեկուցողը, օգտվեցին սելջուկները, արշավանքներ ձեռնարկեցին Անդրկովկասում և տարածեցին իրենց տիրապետությունը։ Բյուզանդիան փորձեց սելջուկների առաջընթացը կանգնեցնել, բայց արդեն շատ ուշ էր։ Մանազկերտի 1071 թ. ճակատամարտում Ալփ-Արսլանը պարտության մատնեց բյուզանդական կայսր Ռոմանոս IV Դիոգենեսին։

Պատմական գիտությունների դոկտոր Ա. Կիկվիձեի զեկուցումը նվիրված էր XI—XII դդ. բյուզանդա-վրացական հարաբերությունների պատմությանը։ Զեկուցողը կանգ առավ այն երկարատև պայքարի վրա, որ վրաց թագավոր Գիորգի I-ը (1014—1027 թթ.) մղեց բյուզանդական կայսր Վասիլ II-ի դեմ, ապա նաև այն հարցի վրա, թե ինչպես Գիորգիի որդի Բագրատի օրոք Վրաստանը ընկավ Բյուզանդիայի ազդեցության տակ։

Կ. Յուզբաշյանի (Լենինգրադ) զեկուցումը նվիրված էր Բյուզանդիայի հետ Տայքի Դավիթ կյուրապաղատի ունեցած փոխհարաբերությունների հարցին X—XI դդ. սահմանագլխին։ Նա ցույց տվեց, թե ինչպես կայսրությունը ստիպեց Դավթին Բյուզանդիային կտակելու իր տիրույթները, ինչպես նա բյուզանդասիրական խմբակցության նյութած դավերի զոհը դարձավ և ինչպես կայսրությունը հնարավորություն ստացավ ներթափանցել Տայք։ Կ. Յուզբաշյանը հշգրտեց Դավիթ կյուրապաղատի սպանության տարեթիվը։ Նրա կարծիքով Դավիթն սպանվեց ոչ թե 1001, այլ 1000 թ.։

Վեճերի առիթ տվեց Գունբայի զեկուցումը՝ նվիրված արխազա-բյուզանդական քաղաքական կապերի հարցին (IV—V դդ.)։ Հետաքրքրությամբ լսվեց Մ. Յա. Սյուզյումովի զեկուցումը՝ «Գլեբեյական մասսաների և զիլոտների հակասությունները Թեսաղոնիկեում 1342—1348 թթ.», ինչպես և Ի. Ֆ. Ֆիխմանի զեկուցումը՝ նվիրված պատրոնատի զարգացմանը բյուզանդական Եգիպտոսում։

Պատմության և իրավունքի պատմության սեկցիայում զեկուցումներ կարդացին նաև պատմական գիտությունների դոկտոր Գ. Կ. Գոգալիշվիլին, Օ. Լորդքիպանիձեն, Ի. Մ. Նոդիան։

Արվեստի պատմության սեկցիայում զեկուցումներ լսվեցին նվիրված մի շարք տաճարների որմնանկարներին, առանձին ձեռագրերի մանրանկարներին, սրբապատկերներին, փայտագրության, ոսկերչության հարցերին։ Այս սեկցիայում ակտիվ մասնակցություն ունեցան վրացի արվեստագետները։ Ուշադրությամբ լսվեց Տ. Բ. Վիրսալադեի զեկուցումը Ատենի վանքի (VII դար) XI դարի որմնանկարների մասին։ Զեկուցողը ցույց տվեց, որ խնդրո առարկա որմնանկարների տակ պահպանվել են XI դարից առաջ կատարված որմնանկարներ, այդ թվում նաև բազմաթիվ արձանագրություններ, որոնք ունեն պատմական մեծ նշանակություն։ Դրանցից է Բուղայի կողմից Թբիլիսիի ավերման մասին վկայող արձանագրությունը։

Ուշագրավ էր Ա. Վ. Բանկի զեկուցումը՝ «Բյուզանդական X—XIII դդ. կիրառական արվեստի դերը գեղարվեստական կերպարների և ձևերի տարածման գործում»։

Շ. Յա. Ամիրանաշվիլու զեկուցումը՝ «Պայեոլոգների ժամանակաշրջանի բյուզանդական մոնումենտալ նկարչությունը և ազգային դպրոցները» (Կիր Մանուիլ Եվգենիկոս)» մտքերի աշխույժ փոխանակության առարկա դարձավ։ Զեկուցողը առաջ քաշեց այն ճիշտ միտքը, որ ելնելով զանազան երկրներում (Սերբիա, Բուլղարիա, Հին Ռուսիա, Վրաստան) տարվող նորագույն ուսումնասիրությունների տվյալներից, չի կարելի ազգային դպրոցներում գեղարվեստի զարգացման ամբողջ պրոցեսը բացատրել բյուզանդական ազդեցությամբ և միաժամանակ ճիշտ չէ ժխտել այն նպաստը, որ Կոստանդնուպոլիսը տվեց Իտալիային, Սերբիային, Բուլղարիային, Հին Ռուսիային, Հայաստանին և Վրաստանին, որ ազգային առանձնահատկությունը միջնադարյան արվեստում կարելի է լուծել առանձին հուշարձանների պատմա-գեղարվեստական վերլուծությամբ և ոչ թե նախօրոք մշակված ընդհանուր պատմական բանաձևերով։

Բազմաղան էր հնագիտության և ճարտարապետության սեկցիայի թեմատիկան։ Մեծ հետաքրքրությամբ լսվեց Հ. Ջանփոլադյանի (Լենինգրադ) զեկուցումը բյուզանդական ապակու մասին, որի նմուշների զգալի մասը գտնվել է

Հայաստանում հնագիտական պեղումների ժամանակ։ Զեկուցումներ կարդացվեցին նաև Վրաստանում և Ղրիմում հայտնաբերված բյուզանդական դրամների մասին (Տ. Արրամիշվիլի, Ի. Վ. Սոկոլովա), Արևմտյան Վրաստանի վաղ միջնադարյան կառույցների մասին (Վ. Ա. Լեկվինաձե), այսպես կոչված «ասորական խաչերի» ծագման և թվագրման մասին (Վ. Ն. Զալեսսկայա), Պիցունդայի խճանկար հատակի մասին (Լ. Ա. Շերվաշիձե) և այլն։

Հասարակական մտքի պատմություն և գրականագիտություն սեկցիայում լսվեցին Յա. Լյուբարսկու «Բյուզանդական հեղինակները պատմություն գրելու արվեստի մասին», Տ. Կուկավայի «Նեոպլատոնականությունը և դասական շրջանի հին հունական փիլիսոփայությունը», Ս. Ս. Ավերինցևայի «Բյուզանդական գրականության մեջ անտիկ ողբերգության ձևի նորացման փորձերը», Ս. Պ. Մարկիշի «Բյուզանդական հեղինակների գործերի ռուսական թարգմանությունները», Ն. Ա. Մեշչորսկու «Սլավոնա-բյուզանդական վաղ գրական կապերի մասին» և այլ զեկուցումներ։

Թբիլիսիի բյուզանդագիտական կոնֆերանսի աշխատանքներին Հայաստանից, ինչպես ասվեց, մասնակցեցին երեք հոգի։ Պրոֆ. Աշոտ Գայստյանի զեկուցման թեման էր «Հեթումյանների Լամբրոնի իշխանությունը»։ Հայ պատմագրության ուշադրությունից, ասաց զեկուցողը, ընդհանրապես վրիպել է Հեթումյանների Լամբրոնի իշխանության հիմնավորման, նրանց շուրջ հարյուրամյա իշխանության պատմությունը։ Զեկուցողը նշեց, որ ականավոր մասնագետներ այն կարծիքն են հայտնել, թե իբր Հեթումյանների իշխանության պատմությունն սկսվում է 1226 թ., երբ նրանց հաջողվել է նստել Կիլիկիայի պետության գահին։ Զեկուցողի կարծիքով Հեթումյանների ինքնուրույն իշխանությունը հանդես է եկել 1110 թ., Հեթում Սեբաստոս իշխանի օրոք։

Հայկ Մելքոնյանը զեկուցեց IV դարի ասորի նշանավոր գործիչ Հակոբ Մծբնացու աշակերտ Մար Ավգինի վարքի մասին։ Նա հայտնեց, որ իրեն հաջողվել է Մատենադարանի № 1522 ձեռագրում հայտնաբերել Մար Ավգինի վարքի հայերեն հին թարգմանությունը և որ Փավստոս Բուզանդը իր «Հայոց պատմություն»-ը շարադրելիս որպես աղբյուր է օգտագործել նաև խնդրո առարկա վարքի հին հայերեն թարգմանությունը։

Հրաչ Բարթիկյանի զեկուցումը նվիրված էր Հայաստանում XI դ. բյուզանդական տիրապետության հարցերից մեկին, ավելի կոնկրետ՝ Կեկավմենոսների հայկական ընտանիքի հետ կապված հարցերին։

Եզրափակիչ պլենար նիստում լսվեցին Զ. Վ. Ուդալցովայի «Գաղափարական - քաղաքական պայքարը IV—VI դդ. բյուզանդական պատմիչների և ժամանակագիրների աշխատություններում», Ա. Պ. Կաժդանի «Գաղափարական պայքարը Բյուզանդիայում XII դ.», Ն. Կնչակմաձեի «Բյուզանդական հասարակական մտքի պատմությունից, XI դ.», Շ. Նուցուբիձեի «Արևոպագիտիկայի աղբյուրները» և Վ. Ա. Գվախարիայի «Բյուզանդական խազերը վրացական ձեռագրերում» զեկուցումները։

Եզրափակիչ պլենար նիստում սեկցիաների ղեկավարները հանրագումարի բերեցին կոնֆերանսի աշխատանքները։ Կոնֆերանսը որոշեց բյուզանդագետների համամիութենական հաջորդ՝ VIII կոնֆերանսը հրավիրել երեք տարի հետո՝ Խերսոնես քաղաքում։

Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

К ОПРЕДЕЛЕНИЮ «ЭНЕОЛИТА» НА ТЕРРИТОРИИ ЗАКАВКАЗЬЯ ПО ДАННЫМ АНАЛИЗА МЕТАЛЛИЧЕСКИХ ПРЕДМЕТОВ

Известно, что в течение длительного времени ряд древнейших памятников на территории Закавказья причислялся к «энеолитическим». К ним прежде всего относятся памятники так называемой «куро-аракской культуры»[1]. То же самое можно сказать и о некоторых памятниках на территории Армении[2] и Азербайджана; последние были отнесены к «медному веку»[3] или же к «позднеэнеолитическим»[4].

[1] Б. А. Куфтин. Урартский колумбарий у подошвы Арарата. Куро-аракский энеолит. ВГМГ, XII, 1944.

[2] Б. Б. Пиотровский. Поселения медного века Армении. «Советская археология», т. XI, 1948, стр. 171—184.

[3] К. Х. Кушнарева. Памятники медного века в Нагорном Карабахе. «Советская археология», т. XX, 1954, стр. 165.

[4] О. А. Абибуллаев. Раскопки холма Кюль-Тепе близ Нахичевани в 1965 г. МИА, 67, 1959.